

**2020 թ.**  
**Պատասխաններ**  
**հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի հարցաշարերի**

**12-րդ դասարան**

3. **հոգեկերտվածք** - խառնվածք, էություն, տվյալ ազգին բնորոշ հատկանիշների ընդհանրական ամբողջությունը
4. **անկապտելի**- անկողոպտելի, անձեռնմխելի, անհերքելի  
**խոլական**-կատաղի, խենթ, խելագար, ուժգին, բուռն, մոլեգին, տարերային, անսանձ, փոթորկաշունչ, վայրի  
**անգոսնելի**- արհամարհելի, քամահրելի, արհամարհանքի արժանի  
**ոգորել** – մարտնչել, պայքարել, մաքառել, կռվել  
**նախանձախնդիր**- մեծ եռանդով մի բանի հետամտող՝ հետամուտ, որևէ բանի կրքոտ՝ ջերմեռանդ պաշտպան, հետևողական, նպատակամղված  
**խոկում** – մտորում, մտածում, միտք, խոհ, մտմտուք, խոկ  
**անոսր**- նոսր, ոչ թավ, նուրբ, անտեսանելի, անշոշափելի  
**կնգուղ**- 1.կրոնավորի սրածայր գլխարկ, վեղար, 2.բամբակենու խակ՝ չբացված պտուղը  
**ցնորագեղ**-խելահեղ գեղեցկությամբ, խելահեղ՝ անսահման գեղեցկություն ունեցող  
**խանդակաթ**- խանդով՝ գորովով՝ սիրով լի, գորովալից, սիրալիր, ջերմ, ջերմագին
5. **անգամ** - 1. կապ, 2. վերաբերական, 3.ածական, **նման** - 1. կապ, 2. ածական, **սակայն** - 1. համադաս. շաղկապ, 2. վերաբերական, **ասես** -1. շաղկապ, 2. վերաբերական, 3. բայ
6. **շառափ**-1.փայլ, ցոլք, ճաճանչ, 2 գ. հորդ տեղատարափ անձրև, ած., փխբ. հորդ կերպով թափվող, հորդ հոսանք,  
**հույլ** -1.խումբ, բազմություն, փունջ, 2.ա) ծույլ, հեղգ, անփույթ, անտարբեր, բ) դանդաղ, դանդաղաշարժ, գ) ծանրամարմին, գեր, հույր
- 7.**կապուտ**- դիակապուտ, անկապտելիություն, անկապուտ,  
**վիզ**- երկարավիզ, կարճավիզ, հաստավիզ, վզնոց, վզկապ, վզափոկ, վզաթոկ, վզաշղթա,  
**հակ**- հակամետ, հակում, հակված, հակվածություն,  
**ծան**- ծանուցում, ծանոթ, ծանոթություն, ծանոթացում, ծանոթուհի, անծանոթ
8. տարկետում, վիրավորանք, անտարակույս, դպրոցական
9. **դամոկլյան սուր**- մարդու գլխին կախված մշտապես սպառնացող վտանգ.  
Ճագումը՝ Հունաստանի թագավոր Դիոնիսիոսը իրեն նախանձող Դամոկլեսին դաս տալու համար մեկ օրով զիջեց գահը և Դամոկլեսի գլխավերևում ձիու մագով կախեց մի սուր՝ հասկացնելով, թե մշտապես ինչ վիճակում է լինում թագավորը:  
**Հերոստրատի փառք**- չար գործերի ամոթալի հիշատակ, անարգալից փառք՝ անուն, որ չար գործով է վաստակվել. ըստ պատմության՝ Հերոստրատ Եփեսացին փառք վաստակելու, իր անունը հռչակելու համար հրկիզել է Եփեսոս քաղաքում կառուցված Արտեմիսի տաճարը՝ աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը: Չնայած արգելել էին նրա անունը հիշատակել, այնուամենայնիվ նա հայտնվեց պատմության էջերում:

**Գնահատման չափանիշներ  
հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի հարցաշարերի**

**12-րդ դասարան**

3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:  
Խոսքի մասը սխալ նշելու համար հանվում է 0,25 միավոր:
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:
8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:
9. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:

**Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 կետադրականի համար՝ 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր:**